


ՀԱՅ ՄԵԾԱՐԺԷՔ ԵՐԱԺԻՇՏ ՄԸ
Մ Ո Ս Կ Ո Ի Ա Յ Ի Մ Է Ձ

—oo—

Պրովետարը մեզի կը յայտնէ անունը հայ երաժիշտի մը, Կոստանդին Սարաճէվ (Սարաճեան) որ այժմ Մոսկուայի երաժշտական ամենէն ուշագրաւ դէմքերէն մին է դարձած: Սարաճեան ծնած է Թիֆլիս, աւարտած է Մոսկուայի երաժշտանոցի ջութակի եւ երգահանական տեսարանութեան բաժինները: Յետոյ, անցնելով Լայպցիկ, հետեւած է Արթուր Նիքիշի նուագախումբեր վարելու յատուկ դասընթացքին: Այնուհետեւ Մոսկուայի մէջ տուած է սեմիֆոնիք համերգներ, ինքն իսկ ղեկավարելով խումբերը: 1926ին անցած է Վիեննա ու Փրահա, ուր մեծ յաջողութիւն գրտած է իբր նուագախմբի վարիչ: Ներկայիս՝ Մոսկուայի երաժշտանոցի փրոֆէսէօրներէն է: Սարաճեան առաջինն է որ հիմնած է Մոսկուայի մէջ նուագախումբի ղեկավարութեան դասարան մը: Մոսկուայի երաժշտանոցի այդ բաժինէն շրջանաւարտ ելած աշակերտները հիմա կը գործեն երաժշտական զանազան հաստատութիւններու մէջ:

Մոսկուայի սէնֆօնիք ընկերութիւնը կը կրէ փրոֆ. Կ. Սարաճեանի անունը:



ՄԵՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—oo—

«Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտ»ին համեստ աջակցութեան բաժին մը բերելու համար մեր բացած հանգանակութեան, հետեւեալ նոր նուէրները եկան աւելնալ. —

Տօքթ. Յովհ. Սըզըեան՝ 200 ֆր.,
Տօքթ. Յ. Գանթարեան՝ 1 սուրիական ոսկի (20 ֆրանկ),
Բարիկեան (Նիկոսիա)՝ 1 տոլար (18 ֆր. 50):

Կը յուսանք որ ուրիշներ ալ պիտի հետեւին ցարդ իրենց նուէրներով այս հանգանակութեան մասնակցողներուն

օրինակին: Նուէրները զրկել մեր գանձապահին, Dr. J. Artignan, 111, Avenue de l'Union, Arnouville - lès - Gonesse (S. et O), France. Chèques Postaux, Rouen N° 9888:

Այն նուիրատուներէն, որ արձանագրուած են բայց դեռ իրենց խոստացած գումարը չեն զրկած, կը խնդրենք որ հանին զրկել իրենց նուէրը մեր գանձապահին:

Մինչեւ հիմա գոյացած գումարն է (վնարուածն ու արձանագրուածը միասին) 3396 ֆր. 50 սանթիմ: Պ. Յ. Քիւրտեանի նուէրը, 10 տոլար, արձանագրած էինք 250 ֆրանկ. բայց երբ մեր աշխատակիցն այդ գումարն ուղարկեց, տոլարն արդէն ինկած էր եւ 10 տոլարը բռնեց 173 ֆրանկ:

Մենք արդէն իսկ գնեցինք Ծայս Գերման հռչակաւոր Տան Փարիզի մասնակալէն՝ լուսանկարչական առաջնակարգ գործիք մը (Trona տեսակէն), 12 հատ շասի, 1 տիաֆօթ (գոյներու գոխ գործիք), 1 սաք, 1 միրաֆօթ (լուսանկարներու մեծացման համար):

Գնեցինք նաեւ Քօտաֆի Տունէն 25 տուփ ֆիլմ, եւ դեղօրայք: Այդ բոլորին համար վնարեցինք 3264 ֆր. 95 ս., փոխանակ 4100 ֆր. 85 ս.ի: Այդ կարեւոր գեղչը կը պարտինք մեր հայրենասէր եւ անձնուէր բարեկամ՝ ծանօթարուեստագէտ - լուսանկարիչ Յակոբ Սէմէրեանի (Phébus), որ այդ գնումները ինքն իսկ կատարեց:

Ամբողջութիւնը յանձնեցինք Հօկի Յրանսայի Կեդր. Վարչութեան, որ քիչ օրէն կ'ուղարկէ Երեւան՝ Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի նախագահ Պ. Յակոբ Զօրեանին:

Կը յիշեցնենք մեր ընթերցողներուն այն միւս գործիքներն ու իրեղէնները որոնց պէտք ունի Հայաստանի այդ Գի-